




ԱՍՏԴ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ՔԵՆՏԵՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ

Հրատարակում է ամեն կիրակի օրերը

Տարեկան գինն է ԹԷՆԻՍԻՍՈՒՄ 12 դր. վեցամսեան 6 դ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 դ. վեցամսեան 8 դ. Ռուսաստան 3 դր. լի. վեցամսեան 2 դր. լի. Օտար երկիրները 8 ֆունտ. վեցամսեան 5 ֆունտ: Հասցէ Teheran Rédaction A^c TG-ARBEVELAN.

«ԱՍՏԴ-ԱՐԵՒԵԼԵԱՆ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կի ըստի եւ ամեն օրերը:

Յայտարարութիւն ընդունում է ամեն յետոյ. իրարանշիրը թափն 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻԹԻՒՆ

Պերը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.---Ժողովրդի ազգային սահմանադրութեան եւ առաջնորդական վարչութեան նոր-ձուգումը. Հնդկապարսկաստանի առաջնորդական թափուր գահն. Հրաւեր Զաւի-դի արտօնատէր պ. (Բէկ) նաղարեանդին. Ներքին լուրեր. ՄԻՏՐԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր. Քաղաքական տեսութիւն.ԱՅՆԱՍԻՐԱՎԱՆ Դէպի Հայաստան.

ԿՂԵՐԸ

Մեր նախորդ լուրածով խոստացանք բացատրել թէ ինչ է կղերը:

Բացատրենք նախ թէ ինչ է այն պաշտօնը, որի կատարումն հայերիս անգութ ճակատագրի ձեռքով յանձնուած է գործողութար այդ կղեր կոչւած դասակարգին.

Քաղաքական իշխանութիւնից գուրկ ազգերի համար կղերի պաշտօնն աւելի ծանր և աւելի բազմակողմանի է: Փառնասցին ամեն խնդրոց համար պէտք չգալի իր կղերին դիմելու, այն աւել կղերի պարտն է միայն հոգեւոր մի միջնորդութիւն մատակարարել ժողովրդին, բայց մեզ. հայերիս մէջ, ուր հոգեւորականութիւնն ճանաչուած է մեզ տիրող կառավարութեանց կողմից իբրեւ միակ ներկայացուցիչը և գլուխը հայ ազգի, այս, մեզ հայերիս մէջ փոխւում են գնաւ ուսուցանողական պարտքերն:

Հոգեւորականութիւնը մեր մէջ չէ եղած միայն հոգեւոր վերացական յոյսերով իրեն աւանդուած դարձրել օրօրեւ համար, այլ հոգեւոր միջնորդութիւնն ամենայնպէս ուսմիկ քահանան անգամ

կարող է տալ: Մեր մէջ հոգեւորականութիւնն ոչ թէ միայն հոգին պիտի մտածէ, այլ նաեւ մարմնի իրական պահանջներին և կենաց կարեւոր պարտնեքին էլ մի քիչ ուշադրութիւն պարտ ընծայել:

Անհրաժեշտ մի իրողութիւն է որ ուսումն ու գիտութիւնն ներկայ կենաց անհրաժեշտ պարտնեքներն են և հայ ազգութեան անխախտ պահպանման միջոցներից մէկն է նաեւ ուսումն և գիտութեան ընդարձակ մատակարարութիւնն:

Մեր մօտաւոր նախնիքն միայն հոգին են մտածել, մոռանալով որ պէտք է նախ մարմնի գոյութիւն ունենալ որպէսզի հոգին իւր մէջ բնութենի, մարմնը պէտք է լինի որ հոգին ազնուացնէ, մարմնը պէտք է լինի որ նրան արթնցնէ արժանի անէ:

Չեն մտածել երբէք որ մարմնի կենդանի և հոգին գործարուն պահելու համար ուսումն և գիտութիւնն անհրաժեշտ է: Նա է որ մարմնի սեղանիութիւն և հոգեւոր արտակարգ մի փայլէ տալիս. նա է որ մարմնի բարօրութեամբ հոգին երթանկաւոր է. սեղան է մարմնի նիհարողութիւն և հոգին պարտաւորելու քաղաքականութիւնը: Այդ միտարար և կործանիչ քաղաքականութեան շնորհիւ է արդէն որ 30 միլիոն հայն աւսոր թիւ է 4 միլիոնի և գուցէ աւելի պիտի իջնէ, մինչև ոչնչութիւն.

Ով պիտի փրկէ մեզ այդ վտանգից և ապահովէ մեր գոյութիւնը.

Չէ որ վարժարանները, որոնք ուսումն ու գիտութիւն և բարեկրթութիւն տալով մեզ պիտի ապահովեն մեր ապագան:

Ով պիտի բանալ այդ վարժարանները, ով պարտաւորութիւն պիտի տալ ըն-

րանց և միջոց իրագործելու իրենց սրբազան պաշտօնը, ով պիտի քաջալերէ մեր ներկայի և ապագայի համար այդ սրբապաշտութեան տրոպ անխնայ մշակներին ով պիտի անէ այս ամենը:

Ժողովուրդը.....:

Եւ սակայն ժողովուրդը այդ բարի ցանկութեան և օգտի գիտակցութեան մէջ միշտ խոչնդոտ է ունեցել կղերը, որն իրեն յատուկ և իրեն միայն ծանօթ ժողովրդական ճանապարհներով միշտ արգիլել է նրա գէպի յառաջի մութիւն և լուսաւորութիւն ունեցած փափաղը:

Ինչու...: Միթէ կղերը չգիտէր որ ուսմամբ և գիտութեամբ է գարգանալու Հայ ազգը և ընդհանուր ազգութեան շրջանի մէջ պատուաւոր մի վար գրաւելու:

Մեծ կարծիքով կղերը շատ լու գիտէ այդ բանը և այդ իսկ առաժաոտը արգելք է լինում այդ բարի ձգտումին:

Ինչու...: Որովհետեւ կղերին սիրելի չէ յոյսը, նա խաւարի մէջ աւելի յաւարող է գործել յոյսու իր գրպանին և փառասիրութեան:

Խաւարած մի ժողովրդի մօտ նրա անխորհուրդ հրամաններն յարգելի են և կամքն նախադասելի հետեւարար ազատ է իրենց ասպարէզն և որսերն իրաւատ:

Ինչու թող տալ որ ուսմիկ մտքերի վրայից խաւարը փարատի և յոյսը տիրէ: չէ որ մտքի յոյսով կը լուսաւորին նաեւ աշխարհը, երևան կենեն իրենց խաղախութիւնը և իբրեւ երկնային պաշտամ չեն ընդունել այլ ևս իրենց հրամաններն ու կամքն:

Չէ որ կը լուսաւորել ասպարէզը և որսերը կը պահասին:

Չէ որ ժողովուրդը իրեն սեփական կամքը կուենեալ այն ժամանակ և արեւմտ ոչնչարեւելի նման չի հետեւել այլ

ևս իւր առաջնորդին.

Պատճառներ շատ կան որոնք առիթ են առաջ հոգեւորականութեան միշտ ազնու և խաւար պահել իրենց հովուութեան յանձնուած հօտը և նրանց մէջ գիտակցութեան զարթնելուն արգելք գառնալ:

Կղերը, լինելով այս յատկութեան տէր, ամենաւել աշխատել է իր իշաւատութեան տակ անցկացնել զխաւար արար այն վայրն որ ժողովրդին լոյս տալով յառաջացնում է ներքին ոյժ և հսկաբար փոշեր կղերական բլու նախաւորութեան ընդդէմ:

Եւ սակայն ժողովուրդն էլ ունի իր ճշմարիտ բարեկամներն, որոնք ի սէր նրա շահերին և յառաջագիծութեան և մանաւանդ նրան կղերական ազգեցութիւնից հանելու համար չեն խնայում իրենց ամեն ջանքերն և յօգուալ լոյսին կուում են խաւարի և նրա պետերի ընդդէմ:

Եւ այդպէսով ժողովրդի մէջ երկու բաժան ոյժեր են յառաջ գալիս. ժողովրդի բարեկամները և նրանց զապափաւակից հետեւողներ և կղերը որին ախարմելի չը լինելով իւր իշխանութեան գէմ մի ուրիշ կազմակերպուած մարմնի գոյութիւնը ընտրում է իրեն գործակիցներ, որոնք կամ շահագէտ են, ետեւան և փառամոլ և կամ ուրիշ անյայտ կրքերով իրենց անձական միայն ծառայող տգրուկներ:

Եւ ահա վարժարանն իւր սրբազան կոչումի գաղափրակէտից ինկած և ստարնացած ասպարէզ է դաւնում անվերջ պայքարներ:

Եւ ժողովուրդը հոգեւորականութեան արտաքին որբութիւնից շոյած և միւս կողմից վտահ իր բարեկամ էր օգտուէա նպաստի վրայ լաճախ անգիտակից իր բռնելիք միջին ընթացքին տատանւում է հակառակող տարբեր

